ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ հունիսի 19-Ի ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԱՆՑԿԱՑՎԱԾ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ք. Երևան **22 հունիս 2020թ.**

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ Տեսչական մարմին) կառավարման խորհրդի (այսուհետ Կառավարման խորհուրդ) նախագահի 2020 թվականի հունիսի 16-ի թիվ 3Լ որոշման հիման վրա՝ հեռակա քվեարկությամբ, 2020 թվականի հունիսի 19 տեղի ունեցավ նիստ: Էլեկտրոնային քվերակությունը սկսվել է 2020 թվականի հունիսի 19-ին և ավարտվել 2020 թվականի հունիսի 22-ին:

Քվեարկության նյութերը սահմանված ժամկետում ներկայացվել են Խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին:

Օրակարգ

1. Տեսչական մարմնի 2020 թվականի գնումների պլանի փոփոխության (այսուհետ Գնումների պլան) հարցի քննարկում և հավանության արժանացում:

Քվերակությանը մասնակցել են՝

Կառավարման խորհրդի նախագահ՝

Ֆելիքս Ցոլակյան ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարար

Կառավարման խորհրդի անդամներ՝

Ս.Պապիկյան ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար

Ա. Ասոյան ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար

Կ. Բրուտյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Ռ. Գրիգորյան	ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Ա.Ավանեսյանը	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Ա.Ղուլարյան	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի պարտականությունները ժամանակավոր կատարող
Ս. Թովմասյան	ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավար
Մ. Սանդոյան	ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ ներկայացուցիչ
Ս. Թովմասյան	«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի ճարտարապետության ֆակուլտետի դեկան
Ա. Կարապետյան	«Զարգացման լուծումների ինստիտուտ» հիմնադրամի տնօրեն:
Ա. Դանիելյան	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության ներկայացուցիչ:

Քվեարկությունը համարվում է կայացած:

Քվեարկության արդյունքում՝

1. Ֆելիքս Ցոլակյանը քվեարկեց կողմ,
2. Ս.Պապիկյանը քվեարկեց կողմ,
3. Ա. Ասոյանը քվեարկեց կողմ,
4. Կ.Բրուտյանը քվեարկեց կողմ,
5. Ռ. Գրիգորյանը քվեարկեց կողմ,
6. Ա.Ավանեսյանը քվեարկեց կողմ,
7. Ա.Ղուլարյանը քվեարկեց կողմ,
8. Ս. Թովմասյանը քվեարկեց կողմ,

9. Սարգիս Թովմասյանը քվեարկեց կողմ,
10. Մ.Սանդոյանը քվեարկեց կողմ,
11. Ա.Կարապետյանը քվեարկեց կողմ,
12.Ա.Դանիելյանը քվեարկեց կողմ:

Քվեարկության արդյունքները՝ 12 կողմ, 0 դեմ:

Կառավարման խորհրդի անդամ Կ. Բրուտյանի կողմից ներկայացվեց դիտարկումներ, որոնց համաձայն Գնումների պլանի մեջ կատարվեց համապատասխանեցումներ.

Դիտարկուներն հետևյալն է.

Ուսումնասիրելով ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կառավարման խորհրդի հեռակա քվեարկության 2019 թվականի հունիսի 19-ի նիստի օրակարգի 1-ին կետով ներկայացված ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի 2020թ-ի Գնումների պլանը, հայտնում ենք, որ հավելվածով ներկայացված գնումների պլանի ձևաչափն անհրաժեշտ է համապատասխանեցնել ՀՀ ֆինանսների նախարարի 20/05/2017թ. թիվ 231-Ն հրամանով հաստատված «Գնումների պլանում փոփոխությունների և/կամ լրացումների ծանուցման մասին» կարգի պահանջներին:

Սույն արձանագրությանը ծանոթանալուց և համաձայնություն տալուց հետո Կառավարման խորհուրդը որոշեց.

Հավանություն տալ Տեսչական մարմնի 2020 թվականի գնումների պլանի փոփոխությանը:

Կառավարման խորհրդի նախագահ՝ _____ **Ֆ. Ցոլակյան**
ստորագրություն

Կառավարման խորհրդի քարտուղար՝ _____ **Ն.Մկրտչյան**
ստորագրություն